ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի փետրվարի 6-ից 10-ը
Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Ֆելիքս Մելքոնյան, Լիլիթ Ղազարյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչարարության մեթոդաբանության և ընթացակարգերի վարչության Եվրասիական տնտեսական միության օրենսդրության մեթոդական ապահովման բաժնի պետ,

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մաքսային հսկողության վարչության ոչ սակագնային կարգավորման և մաքսային ընթացակարգերի համակարգման բաժնի գլխավոր մաքսային տեսուչ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա, ս.թ. փետրվարի 6-ից 10-ը

4. Հրավիրող կողմը՝

Եվրասիական տնտեսական հանձնաժողով

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Եվրասիական տնտեսական միության շրջանակներում մաքսային կարգավորման կատարելագործման հարցերով աշխատանքային խմբին կից փորձագիտական խմբի նիստի անցկացման նպատակը «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության նախագծի՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում երկրորդ ներպետական համաձայնեցման արդյունքների քննարկումն էր:

Արձանագրության նախագծով նախատեսվում է սահմանել էլեկտրոնային առևտրի ապրանքների՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով տեղափոխման կարգն ու առանձնահատկությունները:

6. Քննարկված թեմաները՝

Փորձագիտական խմբի նիստի ընթացքում քննարկվել են «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության նախագծի՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում երկրորդ ներպետական համաձայնեցման արդյունքները, որոնք մասնավորապես վերաբերվում են էլեկտրոնային առևտրի ապրանքների սահմանմանը, էլեկտրոնային առևտրի ապրանքների նկատմամբ մաքսային մարմինների կողմից իրականացվող գործառնություններին, էլեկտրոնային առևտրի ապրանքների համար գանձվող մաքսային վճարներին, մաքսատուրքի, հարկերի վճարման գծով պարտավորությունների կատարման ապահովմանը, էլեկտրոնային առևտրի ապրանքների հայտարարագրերում փոփոխությունների իրականացմանը, «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի կիրառման առանձնահատկություններին, էլեկտրոնային առևտրի ապրանքների ժամանակավոր պահպանությանը, մաքսային հայտարարագրմանը, էլեկտրոնային առևտրի ապրանքների առնչությամբ «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգի կիրառման առանձնահատկություններին, էլեկտրոնային առևտրի ապրանքների արժեքի որոշման կարգավորումներին, էլեկտրոնային առևտրի ապրանքների նկատմամբ մտավոր սեփականության օբյեկտների պաշտպանության միջոցառումների իրականացմանը, էլեկտրոնային առևտրի օպերատորների ռեեստրում իրավաբանական անձանց ներառման պայմաններին, այդպիսի ռեեստրից էլեկտրոնային առևտրի օպերատորներին հանելու հիմքերին, էլեկտրոնային առևտրի օպերատորների պատասխանատվությանը, պարտավորություններին, ինչպես նաև էլեկտրոնային առևտրի ապրանքների՝ մաքսային սահմանով տեղափոխմանն առնչվող այլ դրույթներին (համապատասխան աղյուսակը կցվում է):

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հանդիպումները տեղի են ունեցել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հարթակում՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի համապատասխան պաշտոնատար անձանց և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային մարմինների ներկայացուցիչների, ինչպես նաև ըստ անհրաժեշտության՝ գործարար համայնքի ներկայացուցիչների հետ:

Հանդիպումների ընթացքում ներկայացվել են քննարկվող հարցերի վերաբերյալ համապատասխան առաջարկներ, դիրքորոշումներ, պարզաբանումներ, ՀՀ իրավակիրառ

պրակտիկան, ինչի հիման վրա մշակվել են արձանագրության նախագծի համապատասխան դրույթները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Փորձագիտական խմբի նիստի արդյունքներով մշակվել են «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության նախագծի համապատասխան դրույթները:

Չհամաձայնեցված հարցերը Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների նախաձեռնությամբ նախատեսվում է քննարկել համապատասխան աշխատանքային խմբի շրջանակներում: Փորձագիտական խմբի նիստի արդյունքներն ամփոփվել են համապատասխան արձանագրությամբ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

«Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության նախագծի առանձին դրույթների՝ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում մաքսային կարգավորման կատարելագործման հարցերով աշխատանքային խմբի շրջանակներում քննարկման արդյունքների ամփոփումից և առկա տարաձայնությունների լուծումից հետո նախատեսվում է արձանագրության նախագիծն ուղարկել Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ՝ միջազգային պայմանագրի ստորագրման համար ներպետական ընթացակարգերի իրականացման նպատակով:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Ֆելիքս Մելքոնյան _____ 13/02/2023թ.

Լիլիթ Ղազարյան _____ 13.02.2023թ.

13.02.2023թ.